# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 12.12.2016թ.-ի N 138-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 23 .12.2016թ. ժամը 12⁰⁰

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 12.12.2016թ.-ի N 138-Լ հրամանի հիման վրա աուդիտորական ծառայության պարզեցված ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ ԲԷՑ-ՊԸԾՁԲ-16/57

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝

Կ.Մկրտչյան - գլխավոր տնօրենի տեղակալ

Անդամներ՝

Ա. Ղազարյան - գլխավոր հաշվապահ

Մ. Բաղրամյան - գլխավոր տնօրենի խորհրդական

Վ. Մարտիրոսյան - ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Տ. Սահրադյան - վարկային ծրագրերի իրականացման N 3 բաժնի պետ

Հ. Գևորգյան - մատակարարման բաժնի պետի տեղակալ

Քարտուղար՝

Ռ.Ալբերտյան - գնումների համակարգող

## I. Հայտերի բացման մասին

---

(Կ.Մկրտչյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն՝ 23.12.2016թ., ժամը 11:45-ին , իրավաբանական հասցե՝ ք. Երևան Ամիրյան 4/7 , հեռ.010 526 520
- «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ-ն՝ 23.12.2016թ., ժամը 11:50-ին , իրավաբանական հասցե՝ Ռումինիա, Բուխարեստ, Գարա Հերաշտրաու փող 4D , հեռ.+40213202328

2. Մասնակիցների հայտերի ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Մասնակիցների գնային առաջարկներն են.

| Կազմակերպության անվանում | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | Ծանոթություն |
|---|---|---|
| «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ | 9 000 000 | հանդիսանում է ԱԱՀ վճարող |
| «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ | 9 900 000 | չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ |

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

4. Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկները ճիշտ են:

5. Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

6. Հաշվի առնելով, որ «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ Աուդիտորների ցանկում և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով՝ վերջինիս հայտը գնահատել անբավարար և մերժել:

7. «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ-ին ճանաչել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

8. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին հարցում ներկայացնել ֆինանսների նախարարություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

9. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը :

10. Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

Կ.Մկրտչյան

Ա. Ղազարյան

Մ. Բաղրամյան

Կ. Մարտիրոսյան

Տ. Սահրադյան

Հ. Գևորգյան

Ն.Ալբերտյան